Վազներ Երեւանում անց է կացնում մի քանի շաբաթ (էջ 62), որ բաւական միջոց էր՝ ուսումնասիրել կարենալու քաղաքը եւ շրջակայքը:

«Ամէն օր ես սովորութիւն ունէի պտոյտներ գործել քաղաքից դուրս եւ միշտ էլ առիթ՝ շրջելու քաղաքի տխրատես փողոցներում եւ հրապարակներում... Բնութիւնը ընդհանուր առումով շատ ամայի է ե քիչ դրաւիչ»: Միայն հեռում երկարաձգուող լեռներն են ափսեում դիտողի աչքը:

Վազներ զարմանում է, որ երեւանցիք փոխանակ քաղաքի շուրջը եղած առատ քարերից տուն շինելու, կաւից են շինում («նոյնն են անում եւ պարսիկները»): Տաճկական քաղաքները — Էրզրում, Տրապիզոն եւայլն — այդ տեսակէտից անհամեմատ բարձր է համարում Պարսկաստանի եւ Հայաստանի քաղաքներից:

«Ընդհանուր առումով՝ Երեւանը աղքատացել է եւ ընկել», Ռուսերոյ տնտեսական քաղաքականութեան պատճառով: «Այն ժամանակից սկսած, երբ Ռուսաստանը իր երկդլխանի արծիւը մինչեւ Երեւանի հովիտը առաջացրեց եւ իր տխրահռչակ մաքսային սիստեմը անդրկովկասեան նահանգների վրայ ծաւալեց, այդ ժամանակակից սկսած էլ՝ այս երկրամասի տրանզիտային առեւտուրը, որ առաջ ծաղկած վիճակ ունէր, բոլորովի՛ն քայքայուեց», «Պարսկաստան–Վրաստան ճանապարհի մէջտեղն ընկած լինելով՝ Երեւանի իջեւանները (Քարվանսարաները) մշտական եռուզեռի մէջ էին (առաջ) բազմաթիւ առեւտրականների ու քարվանների շնորհիւ: Բեռնատար ձիերը շաբունակ խրխնջում էին քարվանսարաներում, ուղտերը մանդում՝ ընդարձակ — այժմ ամայի ու մեռած — բակերում առեւտրական իջեւանների: Շուկան (բազար) լի էր ապրանքներով, շրջակայքի գիւղացիները վաճառում էին այնտեղ իրենց կենսամթերքները լաւ գներով: Իսկ ով որ գրաստ ունէր, հէնց դրանով էլ ի վիճակի էր լաւ փող վաստակելու... Զարմանալի չէ ուրեմն, որ — հակառակ կլիմայական ատելութեան եւ տխուր յիշողութեանց սարդարների բռնապետութեան մասին — շատ քաղաքի հայեր փափագում են, որ կրկին յետ դայ պարսկական տիրապետութիւնը» (64–65):

Վազներ շրջելով Երեւանի շուկան, անձամբ տեսնում է խղճուկ վիճակում: «Զուր կը փնտռէք դուք այդտեղ տեղայատուկ վաճառքի առարկաներ, որ այնչափ շատ կան Պարսկաստանի եւ Տաճկաստանի առեւտրական խոշոր քաղաքներում: Փոքր Ասիոյ ամէն կարգի գեղեցիկ ու փնտռուող ապրանքները ներկայիս Թաւրիզ են ուղղուում, որի առեւտրական նշանակութիւնը զգալիօրէն աճել է՝ Թիֆլիսի ու Երեւանի հաշուին»:

Իր շրջագայութիւնների միջոցին — ըստ երեւոյթին Աբովեան միշտ էլ հետն է եղել, թէեւ Վ. ամէն անգամ նրա անունը չէ յիշատակում, բայց յոգնակի խօսելուց երեւում է այդ — Վազներ այցելում է նաեւ Երեւանի մզկիթը: Այդտեղ, մի բացգուռ սենեակում, ասում է նա, չիա մոլլան դպրոց էր պահում: Նա երեխաներին սովորեցնում էր թաթարերէն եւ «նրանց հետ միասին կարդում էր արաբերէն Ղորանը, որն ըստ երեւոյթին ոչ աշակերտներն էին հասկանում, ոչ էլ ինքը»:

Վազներ մանրամասն նկարագրում է (էջ 67–78) Երեւանի բերդը («սարդարի պալատը»), ուր եւ իջել էր նա Ֆոն Քիլի մօտ, սրա հրաւէրով: Որչափ եւ հետաքրքիր է այդ ու պատմական տեսակէտից կարեւոր, անկարող ենք կանգ առնել նրա նկարագրութեանց վերայ: Հետաքրքիր ընթերցողին ուղարկում ենք անմիջական աղբիւրի մօտ: Որպէս բերդ, այդ անուանն իսկ արժանի չէ սեպում զայն Վազներ: Այդ կարծիքն են յայտնել նրա մասին նաեւ ուրիշներ:

Մասնակի հետաքրքրութիւն ներկայացրել է բերդի ներսը, իր գեղարուեստական մանրանկարներով ու կառուցուածքով, ինչպէս նաեւ սարդարի պարտէզը: «Բերդը հիմնուել է ուշ, 1582 թուականին, տաճիկների ձեռքով, որ եւ առնուել է պարսիկներից 1615–ին»:

Այդ երկրամասի, ինչպէս նաեւ Ատրպատականի, Գիլանի եւ Մազանդարանի մահմեդական տարրը, թէեւ լեզուով ու ծագումով ցեղակից է տաճիկներին, բայց միշտ էլ զէնքը ձեռին ու աւելի մեծ ուժով քան պարսիկը, կռուել է տաճկի դէմ, որովհետեւ շիա է ինքը: